


## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(13 նոյեմբերի, 2018 թ.)

*Սիրելի՛ սգակիր ժողովուրդ,*

*Այսօր աղոթքով և տխուր սրտով հրաժեշտ ենք տալիս Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, աշխարհահռչակ ծանրորդ, ի Տեր հանգուցյալ Յուրի Վարդանյանին։*

*Լուսավոր ու ջերմ զգացումներով ենք անդրադառնում նրա երկրավոր կյանքի անցած ուղուն, ազգային մեր անդաստանում նրա գովարժան ավանդին, մարզաշխարհում ունեցած մեծ հռչակին ու բացառիկ ներդրումին և բազմաթիվ հայորդյաց ու տարբեր ազգերի մարզասերներին նրա փոխանցած ոգեշնչումին։*

*Բարեհիշատակ Յուրի Վարդանյանն իր մեջ կրում էր մեր ժողովրդի անկոտրում կամքի ու մաքառումների վկայությունը, հաղթանակներ կերտելու աննկուն ոգին։ Ծանրամարտի մրցասպարեզում բացառիկ ելույթներով նա միշտ նոր նվաճումներ արձանագրեց՝ դառնալով Եւրոպայի և աշխարհի բազմակի չեմպիոն, օլիմպիական չեմպիոն։ Աշխարհի առաջնություններում տասնյակ ռեկորդներ սահմանելով նա հավելեց փառքն ու հեղինակությունը մեր ժողովրդի։ Մարզական իր փայլուն ուղիով, անձնական օրինակով, նաև մարզչական աշխատանքով մեծանուն հայորդին քաջալերել ու ոգեշնչել է նոր սերնդի մարզիկներին։*

*Լուսահոգի Յուրի Վարդանյանին ուժ էր տալիս և սնում նրա անպարտելի կամքն ու ոգին հայրենի երկիրը հզոր ու առաջընթացի մեջ տեսնելու երազանքը։ Այդ ոգին դրսևորվում էր ոչ միայն ծանրամարտի հարթակում, այլև հայրենի մեր պետության նորոգ առաջընթացին ու մեր ժողովրդի բարօր գալիքի կերտմանը ծառայելու ձգտումի ու նվիրումի*

*մեջ, որով նա ստանձնեց սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի և Վրաստանում ՀՀ դեսպանի պաշտոնները։*

*Հրաժեշտի այս պահին հոգելույս Յուրի Վարդանյանի պայծառ կերպարը՝ իր դյուցազնական ոգով, իր հայկյան ուժով, իր փառքի ու հռչակի մեջ, մեր առջև հառնում է նաև իր պարզահոգությամբ, բարի ու վեհանձն նկարագրով։*

*Ամենքիս համար ցավ է արժանավոր հայորդու անժամանակ մահը։ Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ բերում ենք Մեր վշտակցությունը ննջեցյալի ընտանիքին և բոլոր սգացյալներին։*

*«Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25.34),- ասում է Քրիստոս աստվածահաճո և հավատավոր կյանքով ապրած Իր հետևորդներին։ Տերունական այս կոչի համաձայն՝ հոգելույս Յուրի Վարդանյանը ժամանակավոր այս կյանքից անցնում է հանգրվանելու աստվածաշնորհ հավիտենական երանության, խաղաղության ու հանգստության մեջ։*

*Ի խորոց սրտի աղոթքով առ Բարեգութն Աստված հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունը բարեհիշատակ Յուրի Վարդանյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին և բոլոր վշտացյալներին։ Թող նրա պանծալի անունը հավերժ ապրի հայորդյաց սրտերում։*

*Խունկ, աղոթք և օրհնություն մեծանուն հայորդու լույս հիշատակին։*

*Վշտակից սիրով և օրհնությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ